ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

18 հոկտեմբերի 2018 թվականի N 123-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 5/32/51880-18 գրությունը, «ԷՔՈՒԻՎԵՍՏ ԱԼԼԻԱՆՍ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ» ՍՊ ընկերության 2018 թվականի հուլիսի 25-ի թիվ 02/07 դիմումը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԷՔՈՒԻՎԵՍՏ ԱԼԼԻԱՆՍ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի հանքային շրջանի Ուռուտի հանքային դաշտի սահմաններում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու 2015 թվականի հուլիսի 27-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/212 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 2 տարով՝ սահմանելով մինչև 2020 թվականի հուլիսի 27-ը,

2) տրամադրված տարածքի մակերեսը նվազեցնել 1645.5 հա-ով՝ սահմանելով 1644.5 հա, հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ 1.X=4557229.9 Y=8444167.7, 2.X=4554993.0 Y=8446898.0, 3.X=4554993.0 Y=8448898.0, 4.X=4553995.9 Y=8451390.5, 5.X=4553291.3 Y=8450920.3, 6.X=4553618.1 Y=8448897.9, 7.X=4548007.9 Y=8445753.5, 8.X=4549895.7 Y=8444645.8, 9.X=4551995.8 Y=8446928.2, 10.X=4552995.1 Y=8447089.0, 11.X=4554996.6 Y=8445905.3, 12.X=4555567.3 Y=8444564.9, 13.X=4557022.3 Y=8443667.3 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):

2. կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի հանքային շրջանի Ուռուտի հանքային դաշտի սահմաններում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-212 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր):

3.Ընդերքի գործակալության պետին՝

1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում Պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) Ընկերության կողմից Պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակները,

3) ծանուցել Ընկերությանը այն մասին, որ սահմանված ժամկետներում Պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

10/18/2018

X

VERIFIED OCSP 18-Oct-18 14:29:34 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118